Խ. Աբովյանի անվան հայկական

պետական

մանկավարժական համալսարան հիմնադրամ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում

Կատարող՝ - Երևան N132 մսուր –մանկապարտեզ » ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Անահիտ Հովհաննիսյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն……..……3

Գլուխ 1. Ընտանեկան դաստիարակության հիմնահարցերը

1.1 Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները……..6

1.2 Դաստիարակ –ծնող համագործակցության ձևերն ու միջոցները……..…7

Գլուխ 2. Փորձարարական աշխատանք

2.1 Հետազոտության նպատակը, ընթացքը ……..……9

2.2 Կ/դ կրթության նորարական մոտեցումների համատեքստում ծնող-դաստիարակ համագործակցության ապահովումը ՆՈՒՀ-ում……..…..9

2.3 Հետազոտական աշխատանքի արդյունքների վերլուծություն…… 17

Եզրակացություն……19

Գրականության ցանկ……20

Ներածություն

Երջանիկ է այն երեխան , որին ուղեկցում են բանիմաց, փորձառու, հեղինակություն և հարգանք վայելող, ընկերաբար վերաբերվող, խորհրդատու մեծահասակներ: «Այն երեխան, որը մանկության շրջանում իր դաստիարակներին ու ուսուցիչներին չի ընկալել իբրև հեղինակությունների, երբևէ չի կարող դառնալ ազատ մարդ» :( Ռ. Շտայներ)

Հետազոտական աշխատանքիս թեման ընտրեցի ծնող-մանկավարժ- երեխա կապը, որովհետև շուրջ թ տասնամյակ  է հետազոտում եմ երեխաներին, նրանց ծնողներին, որպեսզի երեխաների հետ աշխատանքս ավելի արդյունավետ լինի:

Մանկավարժական գործունեությանս սկզբնական տարիներին երեխաներին և ծնողներին դիտարկում էի միայն մանկավարժական պրիզմայով: Մեկ օրինակ՝ երեխաների ադապտացիոն շրջանում միշտ խորհուրդներ ոի տալիս , որ ծնոցները չխանգարեն , չխոչնդոտեն  երեխաների հարմարման փուլին: Բացատրում էի, որ քանի դեռ երեխան պատուհանից կամ կիսաբաց դռնից այն կողմ ծնող է տեսնում նա շարունակելու է լացել և հույս ունենալ , որ իր մայրիկն է դրսում ու լացն լսելով կգա իրեն կտանի: Միշտ զարմանում էի , որ ծնողները չէին հասկանում այդ պարզ ճշմարտությունը: Սական , երբ առաջին անգամ ես էի ծնողի կարգավիճակում  ինձ տեսա մյուս կողմից և հոգեբանորեն հասկացա ծնողների ապրումները, զգացողությունները, չնայած, որ քաջ գիտակցում էի նախկինում իմ ասած բազմաթիվ օրինակները:

Այդ ժամանակից սկսեցի դիտարկել ծնողի տեսանկյունից ևս: Սեփական երեխայիս օրինակով ես դարձա համագործակցող, քննարկող, ծնողի կարծիքը գնահատող և կարևորող: Հասկացա,որ ունենք երկուստեք շահագրգիռ կողմեր: Ծնողը ևս ունի մեթոդներ, մոտեցումներ և ամենակարորը՝ համագործակցելով ծնողի հետ՝ դրական արդյունքն ավելի ակներևէ:

Ծնողի կարգավիճակում լինելուց սկսած՝ գործունեությանս մոտեցումը փոխվեց: Ցանկացած իրավիճակում փորձում եմդիտաչկել ինձ ծնողի տեղում և փորձում հասկանալ, եթե լինեի ես կամ իմ երեխան ձևաչափով: Այդ ժամանակներից ինձ սկսեց հետաքրքրել յուրաքանչյուր ծնողի խելամիտ, ընդունելի և ոչ ընդունելի, տարբերվող մտքերը: ԿարևորեցիԾնողի , յուրաքանչյուր կարծիք: Համեմատականներ անցկացնելով ավարտական խմբի  ծնողների և կրտսեր խմբի ծնողների հետ , (որ նոր են եկել մանկապարտեզ)բավականին նկատելի է տարբերությունը: Սկզբում ծնողները միշտ ունենում են մտավախություն, շատերը չեն

պատկերացնում ինչ է իրենից ներկայացնում մանկապարտեզի աշխատանքը: Շատ հաճախ այս ու այն կողմից լսելով տարբեր բացասական  կարծիքներ, նույն տրամադրվածությամբ գալիս  են, սակայն աշխատելով, համագործկցելով միմյանց հետ. Սկսում են վստահել: Ճանաչել մանկապարտեզն ու իր որդեգրած սկզբունքները, բոլորը ( շղթայական) աշխատում են հանուն երեխաների: Ծնողն սկսում է վստահել, շատ հաճախ մեր կարծիքն  ավելի կարևորել ու գնահատել:

Խմբում 30 երեխա, նշանակում է գործ ունենք այդքան ծնողների՝ հայրիկ, մայրիկ, տատիկ, պապիկների, հարազատների և նույնիսկ հարևանների հետ: Ինչ խոսք բոլորը չէ որ կիսում են մեր կարծիքը, սակայն փորձում ենք համագործակցել, քանի որ մենք ունենք մեկ ընդհանուր երեխա- սան, որի դաստիարակությունն ու կրթությունը հուզում է և ծնողին, և մանկավարժին:

Մանկապարտեզը և ընտանիքը երկու կառույցներ են, որոնք կանգնած են ապագայի ակունքներում և նրանց փոխադարձ կապի հետևանքներ կրողը երեխան է : Կարևոր է, որ մանկապարտեզի և ընտանիքի պահանջը լինեն միասնական:

Աշխատանքիս ընթացքում ծնողներին ներգրավելու , նրանց հետ համագործակցելու ավանդական մեթոդներից բացի կազմակերպել ենք ծնողական և հատուկ մասնագետների հանդիպումներ, որին հիմք հանդիսացավ խմբի գերակտիվ երեխան: Անհատական աշխատաում եմ յուրաքանչյուր ծնողի հետ: Ամեն մեկին տալով անհրաժեշտ աջակցություն, ուղեցույց, խորհուրդ գրականություն, մեթոդական ցուցումներ: Ծնողների հետ կազմակերպում ենք այցելություն գրադարան , թանգարան, դպրոց, թատրոն, այգի, ժամանցի վայրեր: Ունենք առաջարկությունների արկղիկ: Պատի տեղեկատվական թերթը օնում են ընտանիքին միշտ թարմ տեղեկություն հաղորդելու համար: Ամենօրյա դասացուցակը, օրվա կարգացույցը, ժամանակացույցը, ճաշացանկը, մանկապարտեզի կարևոր նորությունները՝ «Մեր առօրյան»պատի թերթը: Շատ կարևորելով ծնող-մանկապարտեզ համագործակցության թեմայի արդիականությունը, նշված թեմայով ներկայացրել եմ զեկույց մանկավարժական խորհրդի նիստին:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզեցի, որ ծնողների հիմնակնա մասը չի տիրապետում երեխաների զարգացման ու դաստիարակության հիմնահարցերին: Նրանք հիմնականում հենվում են մանկապարտեզում իրականավող կրթադաստիարակչական աշխատանքի վրա: Հաշվի առնելով ընտանեկան առկա վիճակն ու դաստիարակության

ժամանակակից մոտեցուները կազմակերպել ենք թեմատիկ գիտաժողովներ, սեմինարներ և կլոր սեղաններ դաստիարակության առկա խնդիրների շուրջ: Բամազան են երեխաների դաստիարակության միջոցներն ու ուղիները: Երեխայի վարքի, բնավորության, հայացքների ու համոզմունքների ձևավորման վրա ամենից առաջ ազդում են երեխաների կողմից հեղինանակություն վայելող մեծահասակները իրենց սեփական օրինակով: Եթե բոլոր օղակներում՝ ծնող-դաստիարակ- երեխա փոխհարաբերությունները կառուցվի սիրո, համերաշխության , ներողամտության, փոխզիջման և դիմացինի կարծիքը հաշվի առնելու սկզբունով, երկկողմանի դաստիարակությունը՝ ծնող – մանկավարժական , հետևի ժամանակակից նախադպրոցական մանկավարժության պահանջներին, պահպանի ազգային ավանդույթները, կրոնն ու դիմագծերը, ապա մեր երեխաները կլինեն հայրենասեր, զարգացած ու մարդասեր: Նման սերունդները կապահովեն ամուր ընտանիք, իսկ կայուն ու ամուր ընտանիքին ազգի գոյապահպանման հիմքն է:

Թեմայի արդիականությունը-Այս հետազոտական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով,որ ընտանեկան դաստիարակության համակարգը փոփոխություն է կրում,աղճատվում է ընտանիքի նկարագիրը և հետևաբար արդիական է դառնում ընտանիք-մանկապարտեզ համագործակցության խնդիրը:Եվ զարգացած ու դաստիարակված հասարակության հենքը կրթված և զարգացած սերունդ ունենալն է, որը հնարավոր է ծնող–մանկապարտեզ համագործակցության միջոցով: Արդիական է նաև այնքանով,որ ծնող-մանկապարտեզ կապը կարող է ազդել մյանկավարժական աշխատանքի արդյունավետության վրա՝միասնական ուժերով երեխաների մոտից արմատախիլ անել վատը և նրանց մեջ սերմանել դրականը:

## Գլուխ 1. Ընտանեկան դաստիարակության հիմնահարցերը

### 1.1 Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները

**Ընտանիքը հասարակության առաջին սոցիալական օղակն է, ուր դրվում են երեխայի անձնավորության հիմքերը և կառուցվում է նրա սոցիալական կերպարը:**

« Ընտանիքը երեխայի մթնոլորտն է, նրա մեջ աճում և զարգանու են երեխայի մտավոր ուժերը , նրա հոգեկան զորությունները և բարոյական հատկությունները, բոլորն այն չափով, ինչ չափով նպաստում է դրան գերդաստանի կրթողական ազդեցությունը և այն ձևով, ինչ կերպարանք է տալիս նրան դաստիարակող ոգին»( Ռաֆֆի): Յ. Ա. Կոմենսկին նշում էր, որ «**մայրիկի դասերը չունեն դասամիջոցներ, հանգստյան օրեր, արձակուրդ»:** Վերջապես, «**երեխան ընտանիքի հայելին է»** սահմանում դարձած արտահայտությունը լիովին նկարագրում է և կարևորում ընտանիքի անփոխարինելի դերը երեխայի զարգացման և նրա անձնավորության ձևավորման գործում: Ընտանիքի գործառույթներն ու խնդիրները բազմաթիվ են : Ընտանիքի հիմնական գործառույթներն են.

- Վերարտադրողական
- Սոցիալ -տնտեսական
- Սոցիալականացման
- Հոգեթերապեվտիկ
- Դաստիարակչական

**Ընտանիքի կարևորագույն գործառույթները հիմնավորում են մարդկության գոյատևման ընտանեկան ձևի առավել պաշտպանվածությունը, հետևաբար և նպատակահարմարությունը:** Ընտանիքի և ընտանեկան դաստիարակության դերը հատկապես ազդեցիկ է և կարևոր երեխայի ներդաշնակ գոյատևման ու զարգացման գործում : Հոգեբան Ա.Ն. Լեոնտևը նշում է, որ «նախադպրոցական տարիքի երեխան չափազանց զգայուն է իրեն մշտապես շրջապատող հարազատ և մտերիմ մարդկանց հանդեպ, ընկալում և ընդունում է միայն նրանց դաստիարակչական ներգործությունը և դժվարությամբ է համակերպվում օտարների ներկայության հետ»: Ընտանիքը ապահովում է երեխայի հետագա երջանիկ կյանքի համար անհրաժեշտ պայմաններ և ձևավորում որոշակի կենսակերպ: Ընտանեկան

դաստիարակությամբ է մեծ չափով պայմանավորված երեխայի հետագա գոյության և կենսադործունեության ներդաշնակությունը:

**Ընտանեկան դաստիարակությունը մանկավարժական համակարգ է՝ ուղղված կրթադաստիարակչական խնդիրների իրականացմանը ընտանիքի բոլոր անդամների համատեղ մանկավարժական ջանքերի շնորհիվ:**

Ճիշտ է, յուրաքանչյուր ընտանիք ունի դաստիարակության իր սկզբունքներն ու մոտեցումները, սակայն դրանք պետք է պարբերապար վերանայվեն , ճշտվեն և համապատասխանեցվեն ընտանեկան դաստիարակության մանկավարժորեն ընդունելի պահանջներին:

**1.2 Դաստիարակ –ծնող համագործակցության ձևերն ու միջոցները:**

Ընտանեկան դաստիարակության դժվարությունների հաղթահարմանը նպաստում է ընտանիքի սերտ համագործակցությունը նախադպրոցական կրթական հաստատությունների հետ: Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության հիմքում ընկած է երկու սկզբունք.

- Նախադպրոցական կրթական հաստատության ներքին ներգործությունների հանդեպ բաց լինելու
- Նախադպրոցական կրթական հաստատության արտաքին ներգործությունների հանդեպ բաց լինելու

<u>Առաջին սկզբունքը</u> ենթադրում է ծնողների և ընտանիքի մյուս անդամների ակտիվ ներգրավում մանկապարտեզի մանկավարժական գործընթացին: Ծնողների մանկապարտեզի մանկավարժական աշխատանքներին ակտիվ մասնակցությունից շահում են մանկապարտեզի մանկավարժական գործընթացի բոլոր սուբյեկտները:

Համագործակցության <u>երկրորդ սկզբունքը</u> կարևորում է մանկապարտեզի դեպի դուրս բաց լինելու անհրաժեշտությունը: Մանկապարտեզը պատրաստ պիտի լինի համագործակցելու միկրոսոցիումի՝ համայնքի բոլոր սոցիալական ինստիտուտների հետ: Պարտադիր է մանկապարտեզի համագործակցությունը տարածքի դպրոցների, երաժշտական և սպորտային դպրոցների, մանկական ակումբների հետ: Ցանկալի է և չափազանց արդյունավետ մանկապարտեզի փոխադարձ կապը մշակույթային հաստատությունների հետ ( գրադարաններ, թատրոններ, թանգարաններ):

Մանկապարտեզի և ընտանիքի փոխադարձ կապի ձևերը պարբերաբար փոխադարձ կապի ձևերը պարբերաբար վերանայվում և լրամշակվում են: Համագործակցության

ավանդական դարձած ձևռ վերանայվում և լրամշակվում են: Համագործակցության ավանդական դարձած ձևերին ավելանում են ժամանակակից եղանակները, որոնք բխում են հասարակության նախադպրոցական կրթությանը ներկայացվող այսօրվա պահանջներից:

Նախադպրոցական մանկավարժությունն առաջարկում է նաև համագործակցության ժամանակակից եղանակներ: Այսօր չափազանց կարևորվում է մանկապարտեզում ծնողական անկյան ստեղծումը, որը նախատեսվում է որպես ծնողների՝ մանկավարժի և միմյանց հետ հանդիպման վայր: Ծնողական անկյունը նաև ժամանցի , մեկ գավաթ սուրճ խմելու վայր է, որը բարենպաստ պայմաններ է ստեղծում ազատ և անկաշկանդ մթնոլորտում պարզապես զրուցելու, հարցեր քննարկելու համար:

## Գլուխ 2. Փորձարարական աշխատանք

**2.1 Հետազոտության նպատակը, ընթացքը**. Սույն հետազոտության նպատակն է հրմնավորելծնող-մանկապարտեզ կապի արդյունավետությունը,

առանձնահատկությունները, առավելությունները սանի կրթության, դաստիարակության և զարգացման գործում:Խնդիրները և մեթոդները- Որոշել մանկապարտեզի մանկավարժական կոլեկտիվի,ծնողի և սանի հետ համագործակցության և փոխգործակցության կազմակերպման հիմնական ուղղությունները,բացահայտել և վերլուծել մանկավարժական կոլեկտիվի,սաների և ծնողների համագործակցության աստիճանը՝դաստիարակչական խնդրների արդյունավետ լուծման համար: Սահմանել այն մեթոդներն ու ձևերը,որը կնպաստի մանկավարժական աշխատանքի արդյունավետությանը, չապորոշչային վերջնարդյունքների իրականացմանը:

**2.2 Կ/դ կրթության նորարական մոտեցումների համատեքստում ծնող-դաստիարակ համագործակցության ապահովումը ՆՈՒՀ-ում.**

Մանկապարտեզը և ընտանիքը երկու կառույցներ են, որոնք կանգնած են ապագայի ակունքներում և նրանց փոխադարձ կապի հետևանքով կրող երեխան է: Քիչ չեն դեպքերը, երբ ծնողները դաստիարակների կարծիքը չեն կիսում և երբեմն երեխաներին մեղադրում են ծուլության և համառության, չլսելու և չհասկանալու մեջ: Կարևոր է, որ մանկապարտեզի և ընտանիքի պահանջները լինեն միասնական: Դրա համար անհրաժեշտ է՝

- ✓ Աջակցության նպատակով բացահայտել ծնողների կարիքները
- ✓ Իմանալ մանկավարժների , ծնողների և երեխաների իրավունքները և պարտականությունները

Ծնողների կրթությունը անհրաժեշտ է մի կողմից երեխայի դաստիարակության բարելավման , մյուս կողմից հասարակության շահերի տեսանկյունից:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կապը ծնողի հետ երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Ծնողների հետ տարվող աշխատանքի բարելավման բոլոր միջոցները ամենից առաջ պետք է ուղղվեն նախադպրոցական հաստատության և ընտանիքի համագործակցության ամրապնդմանը՝ երեխաների բազմակողմանի

դաստիարակության և զարգացման գործում: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Միևնույն ժամանակ մանկապարտեզն իրապես շահում է ծնողների՝ տվյալ բնագավառին իրազեկվածությունից և երեխայի դաստիարակության գործին նրանց ներդրումներից.Չպետք է մոռանալ, որ ծնողների հետ հաջողված յուրաքանչյուր համագործակցությունը մեծ արժեք ունի, որից երեխան միայն կշահի: Ծնողների հետ ցանկացած շփման ձև պետք է զուգակցել նրանց նկատմամբ ցուցաբերված մեծագույն հարգանքով: Կարելի է ծնողներից շատ բան սովորել, քանի որ նրանք ավելի լավ գիտեն իրենց երեխաներին: Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր ու բարոյական որակների վրա:Այստեղ չի կարելի ստորադասել որևէ կողմի գործառույթները: Համագործացության արդյունքում թե՛ ծնողը, թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների ու հակակրանքների

մասին: Դրական արդյունք կստանանք այն ժամանակ, երբ ծնողների և դաստիարակների միջև կա համատեղ աշխատանք: Ծնողների մանկապարտեզի մանկավարժական աշխատանքներին ակտիվ մասնակցությունից շահում են մանկապարտեզի մանկավարժական գործընթացի բոլոր սուբյեկտները: Մանկավարժական գործընթացի բոլոր մասնակիցների ակտիվ դիրքորոշումը նպաստում է երեխաների դաստիարակությանը համակցված, փոխպայմանավորված և փոխպատասխանատու գործողությունների միջոցով: Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունն օգնում է երկուստեք ճանաչելու և հաշվի առնելու երեխայի դաստիարակության իրական պայմանները՝ այն արդյունավետ կազմակերպելու նպատակով: Յուրաքանչյուր ծնող պետք է գիտակցի իր ակտիվ մասնակցության անհրաժեշտությունը երեխայի դաստիարակության գործընթացին, հանդես գա մանկավարժական գործընթացի սուբյեկտի, մանկավարժի օգնականի և աջակցի դերում, հրաժարվելով պահանջատիրոջ կարգավիճակից: Որքան ավելի սերտ և արդյունավետ լինի ուսումնական հաստատություն- ընտանիք կապը,այնքան ավելի մեծ աջակցություն կստանան երեխաները՝ուսումնառության և դաստիարակության ընթացքը ավելի դրական ու արդյունավետ կազմակերպելու առումով: Քանի որ երեխայի հաճախելը նախադպրոցական ուսումնական հաստատություն ընտանիքին չի ազատում նրան ընտանեկան միջավայրում դաստիարակելու, զարգացնելու և կրթելու պարտավորությունից, ըստ նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենքի:

Մանկապարտեզի և ընտանիքի փոխադարձ կապի ձևերը

պարբերաբար վերանայվում և լրամշակվում են: Համագործակցության ավանդական դարձած ձևերին ավելանում են ժամանակակից

եղանակները, որոնք բխում են հասարակության նախադպրոցական կրթությանը ներկայացվող այսօրվա պահանջներից: Նախադպրոցական հիմնարկները ծնողների հետ աշխատանք կազմակերպելիս օգտագործում են բազմազան անհատական և կոլեկտիվ ձևեր: Ընտանիքի հետ համագործակցության ձևերն են.

1. Այցելություն տուն - Մանկավարժական անձնակազմից որևէ մեկը՝

հիմնականում դաստիարակը այցելում է տուն՝ տեսնելու և ճանաչելու երեխային

, նրա ընտանեկան պայմանները :

2. Երեխային հաստատություն բերելու և տուն տանելու ընթացքում ընկած ժամանակը:

ՈՒսուցանող թիմը կարող է այնպես կազմել ժամատախտակը, որ

երեխային հաստատություն բերելու և տուն տանելու ընթացքում եղած ժամանակը օգտագործվի ծնողների հետ ոչ պաշտոնական հաղորդակցություն ապահովելու համար:

3 Հեռախոսային զանգերը՝

Կարելի է հատուկ նպատակով զանգահարել կամ ամիսը մեկ անգամ զանգահարել յուրաքանչյուր ընտանիքի՝ պարզապես կապը պահպանելու համար:

4 Ծնողական ժողովներ՝

Ժողովներն այն պաշտոնական հանդիպումներն են ,որոնք նպատակ ունեն քննարկելու երեխաների առաջադիմությունը ,ծնողներին հնարավորություն են տալիս կիսելու իրենց

գաղափարներն ու մտահոգությունները: Ժողովները կարող են

օգտակար լինել երեխայի անհատական պլանների կազմման և քննարկման համար:Եթե ժամանակի պակասի պատճառով չի հաջողվում անմիջական հաղորդակցումը,ապա ընտանիքի և մանկավարժների միջև կապ պահպանելու համար կարող են օգտագործվել գրավոր հաղորդակցման որոշ ձևեր:

Գրավոր տեղեկությունը հաղորդելիս պետք է վստահ լինենք,որ մյուս կողմը ստացել է գրությունը:

Գրավոր հաղորդակցման տեսակներից են.

5 Ծնողական ժողովներ՝

Ժողովներն այն պաշտոնական հանդիպումներն են ,որոնք նպատակ ունեն քննարկելու երեխաների առաջադիմությունը ,ծնողներին հնարավորություն են տալիս կիսելու իրենց

գաղափարներն ու մտահոգությունները: Ժողովները կարող են

օգտակար լինել երեխայի անհատական պլանների կազմման և քննարկման համար:Եթե ժամանակի պակասի պատճառով չի հաջողվում անմիջական հաղորդակցումը,ապա ընտանիքի և մանկավարժների միջև կապ պահպանելու համար կարող են օգտագործվել գրավոր հաղորդակցման որոշ ձևեր:

Գրավոր տեղեկությունը հաղորդելիս պետք է վստահ լինենք,որ մյուս կողմը ստացել է գրությունը:

Գրավոր հաղորդակցման տեսակներից են.

ա. Բրոշյուրները կարող են օգնել ծնողներին ծանոթանալ

կրթական ծրագրին: Դրանք կարող են հակիրճ նկարագրել ծրագրի էությունն ու նպատակներն և ընդհանուր տեղեկոըթյուն տալ դրա մասին:

բ. Շաբաթական գրությունները՝

Ամեն շաբաթ մի առանձին գրություն կարելի է ուղղարկել

յուրաքանչյուր ընտանիքի՝ տեղեկացնելու համար իրենց երեխայի նախընտրելի գործողության տեսակի մասին , ինչպես նաև որևէ այլ տեղեկություն հաղորդելու համար:

Ամեն շաբաթ մի առանձին գրություն կարելի է ուղղարկել յուրաքանչյուր ընտանիքի՝ տեղեկացնելու համար իրենց երեխայի նախընտրելի գործողության տեսակի մասին , ինչպես նաև որևէ այլ տեղեկություն հաղորդելու համար:

գ. Ոչ պաշտոնական գրությունները՝

Մանկավարժական կազմը կարող է երեխայի հետ տուն ուղղարկել կարճ գրություններ , որպեսզի ընտանիքի անդամներին տեղեկացնի երեխայի հմտությունների ձեռքբերումների կամ որևէ այլ գործունեության մասին ,ինչպես նաև շնորհակալություն հայտնեն ուսումնական հաստատությանն աջակցելու համար: Ընտանիքի անդամները նույնպես կարող են մանկավարժներին ուղղարկել գրություններ՝ իրենց երախտագիտությունը հայտնելու կամ որևէ խնդրանք հաղորդելու համար :

9. Պատի տեղեկատվական թերթեր՝

Պատ տեղեկատվական թերթը կարող է օգտակար լինել ընտանիքներին՝ միշտ թարմ տեղեկություն հաղորդելով նրանց ժողովների և հատուկ իրադարձությունների , ամենօրյա պարապմունքների բաշխման ցանկի, ընտանիքների համար նախատեսված միջոցառումների, ինչպես նաև՝ ընդհանուր առմամբ ուսումնական հաստատության անցուդարձի մասին:

10. Առաջարկությունների տուփեր՝

Ծնողներին առաջարկվում է իրենց մտքերը, մտահոգությունները, առաջարկությունները և հարցերը գրավոր ներկայացնել մանկավարժական կոլեկտիվի անդամներին առաջարկության տուփի միջոցով, որը տեղադրվում է միջանցքում: Ընտանիքի հետ համագործակցության ձևերից են նաև բաց դռների օրերը, կոնսուլտացիաները-դասախոսություններ, հարց ու պատասխանի երեկոները, երիտասարդ ծնողների դպրոցները և հատուկ կազմակեպվող գիտական կոնֆերանսները ծնողներին հուզող թեմաների շուրջ: Երիտասարդ ծնողների հետ կազմակերպվում են նաև սեմինար-պրակտիկումներ: Բավական արդյունավետ են համատեղ միջոցառումները, որոնք կարող են տարբեր նպատակների ծառայել: Կոնֆերանսներն անցկացվում են ընտանեկան դաստիարակության պրոբլեմներ քննարկելու համար: Դրանց նախապատրաստմանը ներգրավվում է լայն ծնողական ակտիվը:

Ընտանիքում երեխաների դաստիարակության գործին մեծապես օգնում են ծնողների համար կազմակերպվող դասախոսությունները, որոնք կարող են նվիրվել դաստիրակության, երեխաների կյանքի և առողջության պահպանման տարբեր հարցերին:

Ծնողների հետ հետաքրքիր և օգտակար աշխատանքի ձև կարող են դառնալ Հարց ու պատասխանի երեկոները: Հարցերը նախապես հավաքվում, դասակարգվում են և որոշվում է ամեն մի երեկոյի գլխավոր ուղղությունը:

## 1.1 ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ծնողական ժողովները դրանք այն պաշտոնական հանդիպումներն են,որոնց շրջանակներում լուծվում են կազմնակերպչական խնդիրները,ծնողները ստանում են տեղեկատվություն երեխաների ուսումնական գործընթացի ,նրանց վարքի և առաջադիմության մասին, քննարկում են երեխաների առաջադիմությունը,որը ծնողներին հնարավորություն է տալիս կիսելու իրենց գաղապարներն ու մտահոգություններն: Ժողովները կարող են օգտակար լինել երեխաների հետ աշխատանքի անհատական պլանների կազմման և քննարկման համար:

Ծնողական ժողովներն անցկացվում են խմբային և ընդհանուր ձևով: Ընդհանուր ծնողական ժողովում քննարկման են դրվում հարցեր, որոնք կապված են երեխաների կյանքի և առողջության պահպանման, կրթական-դաստիարակչական խնդիրների հետ: Դրանք անցկացվում են տարեկան երեք անգամ, անհրաժեշտության դեպքում կարելի է անցկացնել արտահերթ ժողով:

Խմբային ծնողական ժողովը ծնողների կողմից տվյալ տարիքի երեխաների դաստիարակության խնդիրներին, բովանդակությանը և մեթոդներին ծանոթանալու, ինչպես նաև մանկավարժական գիտելիքների պրոպագանդման գործարար ձև է:

Դաստիարակի խնդիրն է ոչ թե ծնողներին սովորեցնել, այլ նրանց հետ կիսել աշխատանքի տարիների ընթացքում կուտակված երեխաների դաստիարակության փորձը, քանի որ իր աշխատանքի բնույթով ուսուցիչը ավելի շատ գրականություն է կարդում կրթության մասին, քան ծնողները և իր հաղորդակցման շրջանակը: Ծնողներին պետք է ծանոթացնել կրթական աշխատանքի հիմնական ոլորտներին, որպեսզի նրանք հասկանան ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության կարևորությունը: Ընտանիքի անդամներին տեղեկություններ են տրամադրվում երեխաների հետ իրականացվող աշխատանքների և երեխաներից ունեցած ակնկալիքների վերաբերյալ: Ծնողներին պետք է տեղյակ պահել , թե ինչպես կարող են նրանք շարունակել աշխատանքները տանը: Ծնողների համար կազմակերպել ծնողական կրթության

դասընթացներ՝ հիմնված ընտանիքների կարիքների և հետաքրքրությունների վրա: Դասընթացներում ներառել տեղեկություններ երեխայի տարիքային զարգացման, կարգապահության և այլ հարցերի վերաբերյալ:

Ծնողի հետ կապը շատ է կարևորվում փորձագետների կողմից՝ երեխայի դաստիարակության ու կարիքների հանդեպ տանը և մանկապարտեզում միանման մոտեցում ապահովելու և երեխայի հատուկ կարիքներին ճիշտ արձագանքելու համար: Հաճախ ծնողներիհետ աշխատանքը սահ-մանափակվում է ծնողական ժողովների կազմակերպմամբ, որոնք կրթական նշանակություն չեն ունենում, թեև ուսումնական պլանի հա-մաձայն պետք է նախատեսվեն ուսուցողական զեկուցումներ երեխայի զարգացման այս կամ այն թեմայի վերաբերյալ:

Ծնողների հետ աշխատանքը պետք է իրականացվի կազմակերպված, նախնական պայմանավորվածությամբ, որպեսզի այն ձևական բնույթ չկրի և ար-դյունավետ լինի բոլոր կողմերի համար:

Ուսումնական հաստատության աշխատակազմի և ընտանիքների միջև համագործակցային և փոխգործուն հարաբերություններ կառուցելու համար էական նշանակություն ունենհարգանքը և վստահությունը երեխայի և նրա ընտանիքի անդամների հանդեպ: Ծնողական ժողովների և ընտանիքի անդամների հետ այլ հանդիպումների ընթացքում դաստիարակն անպայման պետքէ անդրադառնա երեխայի համակողմանի զարգացման կարևորությանը և առանձին ներկայացնի զարգացման յուրաքանչյուր ոլորտն ըստ տվյալ տարիքի երեխաների զարգացման չափորոշիչների: Երեխայի զարգացման առաջընթացի ու կարիքների վերաբերյալ քննարկումներն ու տեղեկությունների փոխանակումը օգտակար են և՛ ընտանիքի անդամների, և՛դաստիարակների;

Զրույցը նպատակահարմարէ սկսել դրականից, որպեսզի ծնողը համակրանքով ու հավատով լցվի դաստիարակի նկատմամբ: Խոսակցության ընթացքում դաստիարակը պետք է առանց

ավելորդությունների, խորհուրդներ տա ծնողին երեխայի դաստիարակության վերաբերյալ: Պետք է ամեն ինչ անել, որպեսզի հայրերը և մայրերը հավատան դաստիարակին և լսեն նրա խորհուրդները: Ուստի ծնողական ժողովում միշտ անհրաժեշտ է վստահության մթնոլորտ ստեղծել:

Ծնողական ժողովների տեսակները

- Կազմակերպչական
- Թեմատիկ
- Ամփոփիչ

Ծնողական ժողովի նախապատրաստման կանոնները

- Ծնողական ժողովի թեման պետք է լինի հրատապ և հետաքրքիր:
- Ծնողական ժողովը պետք է անցկացնել ծնողներին հարմար ժամին:
- Ծնողները պետք է ծանոթ լինեն ժողովի պլանին:
- Ծնողների և դաստիարակի շփումը պետք է լինի անմիջական:
- Ծնողական ժողովը պետք է լինի մանկավարժորեն օգտակար:
- Նախ պետք է խոսել դրական հարցերի շուրջ,նոր անցնել խնդիրների քննարկմանը:
- Ծնողը պետք է համոզվի,որ մանկապարտեզը պատրաստ է աջակցել ծնողին՝լուծելու երեխայի հետ կապված դժվարությունները:

**2.3 Հետազոտական աշխատանքի արդյունքների վերլուծություն**

- Երբ ծնողներն իրենք են սահմանում երեխայի մոտ որևէ կոնկրետ կարողություն դաստիարակելու կամ սվորեցնելու խնդիրները և դրանք լուծելու քայլերը՝ կանոնները, ավելի պատրաստակամ և հետևողական են այդ կանոնները պահպանելու և մանկավարժի հետ այդ ուղղությամբ համագործակցելու հարցում:

- Ծնողներին գործնական աշխատանքների միջոցով ներգրավել իրենց

երեխաների կրթական խնդիրների սահմանման և այդ խնդիրները լուծելուն միտված գործողությունների մշակման աշխատանքներին:

Այսպիսով, սաների դաստիարակությունը, ուսուցմումը և զարգացումը լիարժեք կիաելի է իրականացնել այն դեպքում,երբ ծնողի և մանկավարժական աշխատողների նպատակները և գործողությունները համընկնում են:

# Եզրակացություն

1. Հոգեբանամանկավարժական գրականության ուսումնասիրության արդյունքում եկա այն համոզման, որ նախադպրոցական տարիքում են դրվում անձնավորության ձևավորման հիմքերը, այս տարիքում է տեղի ունենում անձնավորության հիմնական ձևավորումն ու զարգացումը:
2. Ծնողական դերի գիտակցված և ձևավորված համակարգը իր մեջ ներառում է հետևյալ բաղադրիչները ՝ ընտանեկան արժեքներ, ծնողական վերաբերմունք, ծնողական զգացմունքներ, ծնողական դիրքորոշումները, ծնողական պատասխանատվություն, ընտանեկան դաստիարակություն: Նշված բաղադրիչները կազմում են ծնողական դերի գիտակցման մանկավարժական պայմանների համակարգ:
3. Փորձարարական հետազոտության ընթացքում ծնողների մանկավարժական գիտելիքների ձեռքբերման նպատակով կազմակերպվեցին հետևյալ աշխատանքները՝ ծնողների հետ վստահելի և գործնական հարաբերություններ ստեղծում, մանկավարժական գիտելիքների հարստացում, ծնողների մանկապարտեզ այցելելու հաճախականության ապահովում, համապատասխան տեղեկատվության տրամադրում, մանկապարտեզում իրականացվող որոշակի աշխատանքներին ծնողների ներգրավում՝ ծնողական ընդհանուր ժողովների թեստերի, պարապմունքների, թեմատիկ սեմինարների, տոնական միջոցառումների մասնակցության միջոցով:
4. Մշակված մանկավարժական տարբեր մոտեցումները, ներգործությունները համակարգված կիրառվել են մանկապարտեզի մանկավարժական գործընթացում, ծնողների հետ իրականացված աշխատանքում՝ նպահակ ունենալ նպաստել ընտանեկան դաստիարակության, ընտանեկան համակցված իրականությանը:
5. Իրականացրած փորձարարական հետազոտության արդյունքում զգալիորեն բարձրացավ ծնողների մանկավարժական գիտելիքների ձեռքբերման մակարդակը, հստակեցվեցին երեխաների զարգացման օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքները, ծնողների վերաբերմունքը ներառական կրթության, ինչպես նաև երեխայի հասակակիցների, ընտանիքի անդամների փոխհարաբերությունների վերաբերյալ:

Գրականության ցանկ


1. Ս. Ա Մարության , Ա Մ. Դալլաքյան
   «Նախադպրոցական մանկավարժություն բուհական դասագիրք» Երևան 2008թ.
2. Ա. Հովհաննիսյան
   «Դաստիարակենք միասին » Երևան 2014թ.
3. Ս. Մարության
   « Նախադպրոցական մանկավարժության հիմունքներ» Երևան 2005թ.
4. Т.А. Марковой „Детский сад и семья” Москва 1981г.
5. В. Г.Нечаевой и Т. А. Марковой ,, Нравственное воспитание в детском саду” Москва 1984г.
6. Նախաշավիղ -1. 2013թ.
7. Նախաշավիղ -5. 2016թ.
8. Դիվյա Լարա
   «Ծնողական կրթությունը ծրագրի ուսումնասիրություն» Երևան 2004թ.
9. Ծնողական կրթության ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ , Երևան 2005թ.